«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 Դեկտեմբերի 2021, N 7 - 10

041201.01.7 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ՝ 041201.03.7 «ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ» ԵՎ 041201.04.7 «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ» 2 ՏԱՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՆՈՐ՝ 1,5 ՏԱՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ 041201.03.7 «ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ» ԵՎ 041201.04.7 «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորմամբ ձևավորված «ՀՊՏՀ» ՊՈԱԿ, ՀՀ ԿԲ, ՈԱԱԿ և ԱՓԾՏԱԿ հիմնադրամներից կազմված մասնագիտական փորձագիտական խմբերի կողմից մշակված մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» և 041201.04.7 «Կորպորատիվ ֆինանսներ» կրթական ծրագրերի նոր ուսումնական պլանները հաստատելու մասին հարցը, **արձանագրելով,** որ կրթական ծրագրերը և դրանց ուսումնական պլանները մշակվել են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգի» դրույթների պահպանմամբ, մշակող փորձագետների կողմից քննարկվել են կրթական ծրագրերը սպասարկող առանցքային ամբիոնների հետ, միաձայն՝ կողմ քվեարկությամբ հաստատվել են համալսարանի բանկային գործի և ապահովագրության ու ֆինանսների ամբիոնների 2021 թվականի դեկտեմբերի 15-ի համատեղ նիստում և հաստատման են երաշխավորվել գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի դեկտեմբերի 16-ի N 3 նիստում, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» 1,5 տարի տևողությամբ կրթական ծրագիրը և դրա ուսումնական պլանը:
2. Հաստատել մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.04.7 «Կորպորատիվ ֆինանսներ» 1,5 տարի տևողությամբ կրթական ծրագիրը և դրա ուսումնական պլանը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» և 041201.04.7 «Կորպորատիվ ֆինանսներ» 2 տարի տևողությամբ կրթական ծրագրերի լիցենզիան դադարեցնելու, 041201.04.7 «Կորպորատիվ

ֆինանսներ» 1,5 տարի տևողությամբ առկա և 2 տարի տևողությամբ հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերը և 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» 1,5 տարի տևողությամբ առկա ուսուցմամբ կրթական ծրագիրը վերալիցենզավորելու խնդրանքով:

4. **2023-2024** ուսումնական տարվանից սկսած 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» և 041201.04.7 «Կորպորատիվ ֆինանսներ» կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությունն իրականացնել և ուսումնական գործընթացը կազմակերպել նոր ուսումնական պլաններով:
5. Ներառյալ մինչև 2022-2023 ուսումնական տարին՝ 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» և 041201.04.7 «Կորպորատիվ ֆինանսներ» կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունված ուսանողների ուսուցումը շարունակել ընդունվելու պահի դրությամբ հաստատված և գործած ուսումնական պլաններով:
6. Հանձնարարել համալսարանի ուսումնական բաժնին՝ UMS համակարգում **2023-2024** ուսումնական տարվա համար մինչև 2023 թվականի մայիսի 30-ը 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» և 041201.04.7 «Կորպորատիվ ֆինանսներ» կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսուցման կազմակերպման համար ձևավորել սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանների համապատասխան մոդուլները:
7. Հանձնարարել համալսարանի մակրոէկոնոմիկայի, միկրոէկոնոմիկայի, միջազգային տնտեսական հարաբերությունների, բանկային գործի և ապահովագրության, ֆինանսների, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի, վիճակագրության ու տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնների վարիչներին՝ 2022-2023 թվականներին ամբիոնների ակադեմիական կազմի ներկայացուցիչների վերապատրաստման և ատեստավորման կարգով սահմանված աշխատանքները պլանավորել և կազմակերպել ելնելով նոր ուսումնական պլաններում ներառված դասընթացների որակյալ սպասարկումն իրականացնելու անհրաժեշտությունից՝ մինչև 2022 թվականի մարտի 30-ը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի և արտաքին կապերի դեպարտամենտի հետ հստակեցնելով վերապատրաստվող ակադեմիական կազմի ցանկը և վերապատրաստման մասնագիտական մոդուլները:
8. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. դեկտեմբերի 23

Երևան